

բերել. «արցունքը» կարդացւում է դիւրութեամբ և մանկական արտայայտութիւնները համապատասխանում են փոքրիկ ընթերցողների ըմբռնմանը։ «Արցունքի» հայերէնն ընդհանրապէս գոհացուցիչ է, սակայն դարձեալ պատահում են անճիշտ նախադասութիւններ. օրինակ. «Այն բոլոր դպրոցները ուր պարագում էր ծերունի գերմանացին, իւր արտն էր համարում, որի վրայ (?) գուրս էին եկել նորաբողբոջ ծիլերը» (Էջ 10): «Հովհաննասէնը իւր բոլոր ոյժը գործ էր դնում, որ այդ ծիլերը որո՞մի չփոխուեն, այլ արժանի լինեն այն գերազանց կոչման, որ բարձրից վիճակուած է նրանց վայելելու տիհեղերքի վրայ (?)»: (Էջ 10): «Բայց շուտով ուշքի կանգնեց (?)» (Էջ 61) և այլն։

«Արցունքի» նիւթը դպրոցական կեանքից է վերցրած և խրատական-բարոյալիթական ազդեցութիւն կարող է ունենալ փոքրիկ ընթերցողների վրայ։

4. ՓԱՌՆԱԿԵՍ. Խոլերա. Վոդքիլ մէկ արարուածով, Երևան 1905. Էջ 40,

Մեր այժմեան գրականութեան մէջ բոլորովին անմշակ է մնացել կատակերգութիւնը և այս բանն իւր խորը հոգեքանական պատճառներն ունի. հայ ժողովրդի ներքին և արտաքին հանգամանքներն այնպէս են դասաւորուել, որ զուարճութիւնն ու կատակը բոլորովին մոռացուել կամ թէ շատ կարճատե զբաղմունք է դարձել մեզ համար։ Գոյութեան կոիւր դամոկլեան սրի նման կախուած է եղել միշտ մեր գլխավերել և այդ պատճառով էլ կարծես ժողովրդի հոգեկան տրամադրութիւնն աւելի հակուած է եղել դէպի լուրջն ու թախիծը, քան դէպի զուարճութիւնն ու կատակը։ Եթէ եղել են փորձեր՝ ընդհանուր տրամադրութիւնից շեղուելու և ժողովրդին զուարճացնելու, իմ կարծիքով, մեծ մասամբ անյաջող են անցել։ Այդպիսի աշխատութիւններից շատերը կամ լոկ կատակերգութեան անունն են կրել, կամ թէ շատ թոյլ և անիմաստ բաներ են եղել։

Փառնակէսի «իսօլերան» կարող է զուարճութիւն պատճառել ժողովրդին, բայց մտաւոր մնունդ չի կարող տալ նրան, որովհետեւ ուսանելի գաղափար չկայ այդ աշխատութեան մէջ։ «Մուխսի Դազարի» և «Անտօն Հէքիմեան» բժշկի տիպերն էլ նորութիւն չեն մեր գրականութեան համար։